08.01.19

Հարգելի հաճախորդ,

Սույնով հայտնում ենք, որ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց վճարման պայմաններում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք, ընդհանուր առմամբ, Ձեզ համար ստեղծում են վճարումների կատարման առավել նպաստավոր պայմաններ:

Փոփոխությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

ԿԵՏԻ ՀԱՄԱՐԸ	ՀԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ
4	Արժեթղթերի ռեեստրի վարման և պահպանման, սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի պահպանման և անվանատիրոջ արժեթղթերի հաշվի պահպանման ծառայությունների մասով Ընկերությունը պետք է հաշվետու եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվա 10-րդ աշխատանքային օրը ներառյալ հաշիվ ներկայացնի ծառայություններից օգտվող անձանց (այսուհետ՝ Հաճախորդ) մատուցվող ծառայությունների ծավալին համապատասխան: Պայմանագիրը կնքելուց ներկայացվում է հաշիվ մինչև պայմանագրի կնքման եռամսյակի ավարտը մնացած օրերի հաշվարկով: Հաճախորդները պետք է Ընկերության կողմից հաշիվը ներկայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարեն վերոնշյալ ծառայությունների համար՝ հաշվում ներառված գումարի ամբողջ ծավալով: Եթե եռամսյակի ընթացքում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են վերոնշյալ ծառայությունների գների փոփոխության, դրանք հաշվի են առնվում սկսած այդ փոփոխությունները տեղի ունենալու եռամսյակին հաջորդող եռամսյակի առաջին օրվանից:	Արժեթղթերի ռեեստրի վարման և պահպանման, սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի պահպանման և անվանատիրոջ արժեթղթերի հաշվի պահպանման ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են կանխավճարային սկզբունքով. յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվա 20-ը: Այդ ծառայությունների մասով Ընկերությունը պետք է հաշվետու եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվա 15-ը հաշիվ ներկայացնի ծառայություններից օգտվող անձանց (այսուհետ՝ Հաճախորդ) մատուցվող ծառայությունների ծավալին համապատասխան: Պայմանագիրը կնքելուց ներկայացվում է հաշիվ մինչև պայմանագրի կնքման եռամսյակի ավարտը մնացած օրերի հաշվարկով և այդ եռամսյակի համար Հաճախորդը պետք է վճարի մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը: Եթե եռամսյակի ընթացքում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են վերոնշյալ ծառայությունների գների փոփոխության, դրանք հաշվի են առնվում սկսած այդ փոփոխությունները տեղի ունենալու եռամսյակին հաջորդող եռամսյակի առաջին օրվանից:
5	Հաճախորդների կողմից վճարումները սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում Ընկերությունն այդ անձնաց նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով:	Հաճախորդների կողմից վճարումները սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ժամկետներից 45 օրից ավելի ուշացնելու դեպքում Ընկերությունն այդ անձնաց նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման 45-րդ օրվան հաջորդող յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով:
7	Հավելված 1-ին համապատասխան հաշվարկված գումարները կլորացվում են 10 (տաս) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ, ի օգուտ Հաճախորդի:	Հավելված 1-ին համապատասխան հաշվարկված գումարները կլորացվում են 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ, ի օգուտ Հաճախորդի:
10	Ընկերության «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի 16.5. և 16.6. կետերով նախատեսված դեպքում ծառայությունների կասեցման դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:	Ընկերության «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի 16.4. և 16.5. կետերով նախատեսված դեպքում ծառայությունների կասեցման դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:

Վերոնշյալ փոփոխություններն ուժի մեջ են մտել 2014 թվականի հունվարի 8-ից:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների գների և վճարման պայմանների վերջնական և ամբողջական տարբերակին կարող եք ծանոթանալ www.armenbrok.am ինտերնետային կայքից կամ այցելելով ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1, թիվ 8 տարածք հասցեում գտնվող մեր գրասենյակ:

Հարգանքով՝
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն
Արամ Կայֆաջյան